ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2026 թվականի N 0334-Ա

<<Նարեկ Սարգսյան Արթուրի >> ԱՁ-ԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> ՀՀ օրենքի և Վարդենիս համայնքի ավագանու 24.01.2025 թվականի N 2-Ն որոշման դրույթներով և հիմք ընդունելով <<Նարեկ Սարգսյան Արթուրի >> ԱՁ-Ի տնօրեն Նարեկ Սարգսյանի 08/06/2026 թվականի դիմում-հայտը որոշում եմ՝

1.Թույլատրել <<Նարեկ Սարգսյան Արթուրի >> ԱՁ-ին Վարդենիս քաղաքի Ռոմանի փողոցի 5 հասցեին հարակից գովազդային վահանակի վրա Ա կողմում 18 ք/մ մակերեսով տեղադրված գովազդի (Զինվորական Խանութ) ժամկետը երկարացնել մինչև 30/06/2026 թվականը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. հունիսի 10
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 հունիսի 2026 թվականի N 0335-Ա

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ Վ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ 8 ՀԱՍՑԵԻ 05-005-0254-0040 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,28746 ՀԱ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով, Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42 և 43-րդ հոդվածներով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին 28 հունիսի 2008 թվականի ՀՕ-117-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության 27.10.2010 թվականի ՀՕ-50-ն օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կադաստրի կոմիտեի ղեկավարի• 18.04.2021 թվականի թիվ 75-ն հրամանով և հիմք ընդունելով Արամ Ապրեսի Մելքոնյանի դիմումը (ծնված՝ 10.09.1978 թ.), 04.06.2026 թվականին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը՝ ժառանգական գործ թիվ 113, որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը և այն հանգամանքը, որ 0,28746 հա հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի առաջացնում սերվիտուտ՝ **որոշում եմ.**

1. Ապրես Արամի Մելքոնյանի ժառանգորդ՝ Արամ Ապրեսի Մելքոնյանին (ծնված՝ 10.09.1978 թ.), համասեփականատերեր՝ Դոնարա Մեխակի Մելքոնյանին (ծնված՝ 06.07.1946 թ.) և Հակոբ Ապրեսի Մելքոնյանին (ծնված՝ 01.08.1969 թ.) պատկանող Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Վ. Մամիկոնյան փողոց 8 հասցեի՝ 1975 թվականին կառուցված նկուղ՝ 10,90 քմ և 26,50 քմ, բնակելի տուն՝ 143,30 քմ և 20,0 քմ, աստիճանահարթակ՝ 51,50 քմ, անասնաշենք՝ 39,7 քմ, ավտոտնակ՝ 28,40 քմ, հացատուն՝ 18,60 քմ և 1989 թվականին կառուցված անասնաշենք՝ 88,80 քմ՝ ճանաչել օրինական, որպես Արամ Ապրեսի, Դոնարա Մեխակի և Հակոբ Ապրեսի Մելքոնյանների սեփականություն:

2. Սեփականատերերի կողմից փաստացի օգտագործվող 05-005-0254-0040 կադաստրային ծածկագրով բնակավայրերի՝ բնակելի կառուցապատման 0,28746 հա

հողամասը և 05-005-0419-0065 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության՝ 0,64882 հա վարելահողը՝ ընդամենը 0,93628 հա՝ համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի, գտնվում է սեփականատերերին ընդհանուր հատկացված 0,80 հա հողամասի 20%-ի սահմաններում և ճանաչվում նրանց սեփականություն:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ **ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

2026թ. հունիսի 12
ք. Վարդենիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, (0269)22031 vardenis.gegharquniq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունիսի 2026 թվականի N 0333-Ա

ՍՈՖՅԱ ՖԻՐԴՈՒՍԻ ԽԼՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ՌՈՄԱՆԻ ՓՈՂՈՑ 2 ՇԵՆՔ 42 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ 15.90 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական>> օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով <<ԹԻՎ 28 ՇՄՇ>> ԲԲԸ-Ի կողմից 19.05.2026 թվականին տրված շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը և Սոֆյա Ֆիրդուսի Խլոյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Վարդենիս համայնքի, Վարդենիս քաղաքի Ռոմանի փողոց 2 շենք 42 հասցեում 2011 թվականին ինքնակամ կառուցված 8,40 քմ (ներքին մակերես 6,40 քմ և 4,8 քմ), աստիճանահարթակ՝ 4,70 քմ մակերեսով հասարակական նշանակության շինությունները (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2026RKE5F5) ճանաչել օրինական, որպես Սոֆյա Ֆիրդուսի Խլոյանի սեփականություն:

2. Օրինականացումը իրականացնել հետևյալ սահմանված գներով.

1) Հասարակական շինություն՝ 8,40 քմ (արտաքին) և 4,8 քմ (ներքին) = 13,20 քմ x 20000 ՀՀ դրամ x 0,1422 գործակից = 37550 ՀՀ դրամ:

2) Աստիճանահարթակ՝ 4,70 քմ x 20000 ՀՀ դրամ x 0,1422 գործակից = 13370 ՀՀ դրամ:

3) Դուռ, պատուհան 3 հատ x 10000 ՀՀ դրամ x 0,1422 գործակից = 4270 ՀՀ դրամ:

4) Ընդամենը 55190 (հիսունհինգ հազար մեկ հարյուր ինսուն) ՀՀ դրամ, որը պետք է 60-օրյա ժամկետում մուծվի տեղական բյուջե (ինքնակամ շինության օրինականացման հաշվեհամար-900155101208):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2026թ. հունիսի 10

ք. Վարդենիս